ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/17»

«01» նոյեմբեր, 2019 թ.

«Ալավերդու համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Սասուն Խեչումյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՍՏԱԳ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս.Մարիկյան--ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Ալավերդի համայնքի փողոցների փոսալցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2 ամիս:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 5 Հավելվածում :

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

---

[30] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 19650000 (տասնինը միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որից 3275000 (երեք միլիոն երկու հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու անգամանքը[35] :

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման

---

[35] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 , N 4.1 և N5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Զորավար Անդրանիկի 8/1	ՍՏԱԳ ՍՊԸ
Ալավերդու համայնքապետարան	Ք.Ստեփանավան Վիրահայոց մայրուղի
ՀՀ ֆինանսների Նախարարության	շ 10
Գործառնական Վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900262504021	ՀՀ 2471402011190000
ՀՎՀՀ 06954208	ՀՎՀՀ 06950833
Համայնքի ղեկավար՝ Ս.Խաչումյան	Ս. Մարինյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 2
«01» նոյեմբեր, 2019 թ. *կնքված*
ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/17 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«Ալավերդի համայնքի փողոցների փոսալցման » ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Ալավերդի համայնքի փողոցների փոսալցման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրվանից	2 ամիս
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
Հ/Հ 900262504021
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՍՏԱԳ ՍՊԸ
Ք.Ստեփանավան Վիրահայոց մայրուղի
2 10
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2471402011190000
ՀՎՀՀ 06950833
Ս.Մարիկյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«01» նոյեմբեր, 2019 թ. *կնքված*
ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/17 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
1	45234485	Ալավերդի համայնքի փողոցների փոսալցման աշխատանքներ	0			0			0			19650000			**19650000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
Հ/Հ 900262504021
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար Ա.Խեչումյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՍՏԱԳ ՍՊԸ
Ք.Ստեփանավան Վիրահայոց մայրուղի
2 10
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2471402011190000
ՀՎՀՀ 06950833
Ս. Մարիկյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » նոյեմբեր, 2019 թ.. *կնքված*
ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/17 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » նոյեմբեր, 2019 թ. *կնքված*
ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/17 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն
_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն
_____
ստորագրություն

Հավելված 5
«01» նոյեմբեր, 2019 թ.* *կնքված*
ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/17 ծածկագրով պայմանագրի

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

N	Նյութերի տեսակները	Երաշխիքային ժամկետ
1	Խիճ	3 տարի
2	Ասֆալտաբետոն	3 տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
Հ/Հ 900262504021
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար՝ Ա.Խեչումյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՍՏԱԳ ՍՊԸ
Ք.Ստեփանավան Վիրահայոց մայրուղի
2 10
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2471402011190000
ՀՎՀՀ 06950833
Ս. Մարիկյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
2019թ. Նոյեմբերի 1 կնքված
ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/17 ծածկագրով պայմանագրի

Ծ Ա Կ Ա Լ Ա Թ Ե Ր Թ - Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

Ալավերդի համայնքի փողոցների փոսալցման աշխատանքներ

NN	գնի հիմք	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
	1	2	3	4	5	6
		Դեբեդ թաղամասի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	$մ^3$	0,79	4,637	3,66
	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	$մ^3$	0,36	9,281	3,34
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	$100մ^2$	0,32	559,146	178,93
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	1,58	0,803	1,27
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	1,58	1,788	2,82
		Թումանյան փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	$մ^3$	1,2	4,637	5,56
2	1-961	հենապատի գլխավերևի բնահողի քանդում ձեռքով	$մ^3$	0,95	2,461	2,34
3	1-968	բնահողի բարձում ինքնաթափին ձեռքով	$մ^3$	0,02	1,023	0,02
	Գ130 -5	Ավելորդ բնահողի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 5կմ	տն	0,41	1,788	0,73
5	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	$մ^3$	0,10	9,281	0,93
6	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	$100մ^2$	0,28	559,146	156,56
7	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	2,400	0,803	1,93
8	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	2,400	1,788	4,29
		Երիտասարդական փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	$մ^3$	1,5	4,637	6,96

2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ^3	0,54	9,281	5,01
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ^2	0,54	559,146	301,94
4	27-251 63-1	բիտումի լցաքաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,029	280,869	8,15
5	16-5	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ^2	0,24	524,443	125,87
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	3,000	0,803	2,41
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	3,000	1,788	5,36
		Պղնձագործների փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ^3	3,0	4,637	13,91
	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ^3	1,62	9,281	15,04
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ^2	1,40	559,146	744,7
4	27-251 63-1	բիտումի լցաքաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,1440	280,869	40,45
5	16-5	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ^2	1,20	524,443	629,33
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	6,0	0,803	4,82
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	6,0	1,788	10,73
		Գայի փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ^3	12,0	4,637	55,65
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ^3	2,40	9,281	22,28
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ^2	3,08	559,146	1722,17
4	27-251 63-1	բիտումի լցաքաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,1584	280,869	44,49
5	16-5	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ^2	1,32	524,443	692,27
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	24,00	0,803	19,27
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	24,00	1,788	42,9
		Օսիպյան փողոցի փոսային նորոգման				

1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ^3	1,5	4,637	6,96
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ^3	0,84	9,281	7,8
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ^2	0,72	559,146	402,59
4	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,0504	280,869	14,16
5	16-5	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ^2	0,42	524,443	220,27
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	3,0	0,803	2,41
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	3,0	1,788	5,36
		Շահումյան փողոցի փոսային նորոգման				
	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ^3	2,2	4,637	10,2
2	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ^2	0,33	559,146	184,52
3	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,0744	280,869	20,9
4	16-5	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ^2	0,62	524,443	325,15
5	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	4,400	0,803	3,53
6	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	4,400	1,788	7,87
		Զորավար Անդրանիկի փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ^3	2,0	4,637	9,27
	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ^3	1,56	9,281	14,48
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ^2	0,58	559,146	324,3
4	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,0216	280,869	6,07
5	16-5	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ^2	0,18	524,443	94,4
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	4,000	0,803	3,21
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	4,000	1,788	7,15

		Սայաթ-Նովա փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ^3	1,0	4,637	4,64
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ^3	0,84	9,281	7,8
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ^2	0,32	559,146	178,93
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	2,0	0,803	1,61
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	2,0	1,788	3,58
		Միկոյան եղբայրների փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ^3	4,0	4,637	18,55
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ^3	2,52	9,281	23,39
	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ^2	0,57	559,146	318,71
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	8,00	0,803	6,42
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	8,00	1,788	14,3
		Սողոմոն Թեհլերյան փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ^3	16,0	4,637	74,2
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ^3	3,78	9,281	35,08
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ^2	2,78	559,146	1554,43
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	32,0	0,803	25,7
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	32,0	1,788	57,2
		Ջրավազան փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ^3	2,2	4,637	10,2
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ^3	2,04	9,281	18,93
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ^2	0,180	559,146	100,65
4	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,06	280,869	16,85
5	16-5	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ^2	0,50	524,443	262,22

6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	4,400	0,803	3,53
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	4,400	1,788	7,87
		Սանահին կայարան թաղամաս տանող ճանապարհի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	$մ^3$	3,0	4,637	13,91
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	$մ^3$	3,50	9,281	32,48
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	$100մ^2$	0,45	559,146	251,62
4	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,144	280,869	40,45
5	16-5	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	$100մ^2$	1,20	524,443	629,33
	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	6,0	0,803	4,82
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	6,0	1,788	10,73
		Խուդյակով փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	$մ^3$	1,0	4,637	4,64
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	$մ^3$	0,66	9,281	6,13
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	$100մ^2$	0,14	559,146	78,28
4	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,1416	280,869	39,77
5	16-5	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	$100մ^2$	1,18	524,443	618,84
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	2,000	0,803	1,61
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	2,000	1,788	3,58
		Սպանդարյան փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	$մ^3$	0,7	4,637	3,25
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	$մ^3$	0,24	9,281	2,23
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	$100մ^2$	0,21	559,146	117,42

4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	1,400	0,803	1,12
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	1,400	1,788	2,5
		Էվոյան փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ^3	3,0	4,637	13,91
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ^3	0,90	9,281	8,35
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ^2	0,36	559,146	201,29
4	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,0252	280,869	7,08
5	16-5	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ^2	0,21	524,443	110,13
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	6,000	0,803	4,82
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	6,000	1,788	10,73
		Աքորի գյուղ տանող ճանապարհի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ^3	1,6	4,637	7,42
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ^3	1,20	9,281	11,14
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ^2	2,21	559,146	1235,71
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	3,200	0,803	2,57
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	3,200	1,788	5,72
		Հաղպատ գյուղի փողոցների փոսային նորոգման				
	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ^3	8,0	4,637	37,1
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ^3	6,00	9,281	55,69
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ^2	0,50	559,146	279,57
4	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,240	280,869	67,41
5	16-5	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ^2	2,00	524,443	1048,89
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	16,0	0,803	12,85
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	16,0	1,788	28,6

		Մարտի 8-ի փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ^3	1,0	4,637	4,64
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ^3	0,60	9,281	5,57
3	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,0672	280,869	18,87
4	16-5	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ^2	0,56	524,443	293,69
5	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	2,000	0,803	1,61
6	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	2,000	1,788	3,58
		Բաղրամյան թաղամասի փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ^3	0,5	4,637	2,32
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ^3	0,24	9,281	2,23
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ^2	0,20	559,146	111,83
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	1,000	0,803	0,8
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	1,000	1,788	1,79
		Սանահին գյուղի 6-րդ փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ^3	4,0	4,637	18,55
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ^3	3,60	9,281	33,41
	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ^2	0,18	559,146	100,65
4	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,072	280,869	20,22
5	16-5	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ^2	0,60	524,443	314,67
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	8,000	0,803	6,42
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	8,000	1,788	14,3
		Միկոյան եղբայրներ փողոցից դեպի վանական համալիր տանող ճանապարհի փոսային նորոգման				

1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ^3	6,0	4,637	27,82
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ^3	3,82	9,281	35,47
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ^2	0,16	559,146	89,46
4	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,199	280,869	55,95
5	16-5	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ^2	1,66	524,443	870,58
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	12,000	0,803	9,64
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	12,000	1,788	21,45
		Ընդամենը				16375,00
		ԱԱՀ 20%				3275,00
		Ընդամենը				***19650,00***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության Գործառնական Վարչություն
Հ/Հ 900262504021
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար Ս.Խեչումյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՍՏԱԳ ՍՊԸ
Ք.Ստեփանավան Վիրահայոց մայրուղի 2 10
,Արդշինբանկ ՓԲԸ
ՀՀ 24714020111190000
ՀՎՀՀ 06950833
Ա.Մարիկյան

/ստորագրություն/
Կ.Տ.